# Տ. ԱՐԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՇՅԱՆ

Ծնվել է 1954 թ. Դիարբեքիրի (Տիգրանակերտ) Սիլվան գյուղաքաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Դիարբեքիրում:

1966-1967 թթ. հաճախել է Պոլսի Ս. Խաչ դպրեվանք:

1967 թ. վերջին մեկնել է Երուսաղեմ և ուսումը շարունակել Ս. Հակոբյանց վարժարանում:

1973 թ. ավարտելով վարժարանը՝ ձեռնադրվել է սարկավագ:

1976 թ. ավարտելով Երուսաղեմի ընծայարանը, ձեռամբ Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Եղել է Կ. Պոլսի Հալը Ճըօղլու և Ղալաթիայի թաղերի հայոց հոգևոր հովիվ: Ներկայումս Եշիլ գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցու հոգևոր սպասավորն է:

Լինելով Պատրիարքության Կրոնական ժողովի անդամ՝ 1999 թ. ընտրվել է Կրոնական ժողովի ատենապետ:

1999 թ. ստացել է ծայրագույն վարդապետության աստիճան:

1999 թ. դեկտեմբերի 19-ին, ձեռամբ Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս: